ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԳԱՑՈՒՄՈՎ

Արմենպրեսի թղթակիցը ԼՂԻՄ-ի հատուկ կառավարման կոմիտեի կուսակցական ապարատի պատասխանատու աշխատող Էդուարդ Վահանի Վարդանյանին խնդրեց պատմել, թե ինչ վիճակում է գտնվում Լեռնային Ղարաբաղի բնակչությանը պարենամթերքով ապահովելու գործը:

— Լեռնային Ղարաբաղը առաջներում էլ անբավարար է ապահովվել պարենային ապրանքներով,— ասաց նա:— Սակայն վերջին երկու տարում այդ պրոբլեմն առանձնակի սուր բնույթ ստացավ, որը, բացի դրանից, խորանում է մարզի ձգձգվող շրջափակումով: Լեռնային երկրամասի վրա տնտեսական ճնշում գործադրելու քաղաքականության ոգեշնչողներին թվում է, թե նման գործելակերպով կարելի է արցախցիներին ստիպել հրաժարվել իրենց ինքնորոշման համար մղվող քաղաքական պայքարից: Ուղղակի ասենք, մարդկանց վիճակը հեշտ չէր լինի, եթե մեզ օգնության ձեռք չմեկնեին ամենից առաջ Մայր Հայաստանը, ինչպես նաև մեր ռուս, վրացի և ուկրաինացի եղբայրները:

Հատուկ կառավարման կոմիտեի ջանքերի շնորհիվ բոլոր անհրաժեշտ մթերքները մարզ էին բերվում օդային տրանսպորտով: Վերջերս Ստեփանակերտի երկաթուղային կայարանում, թեև մասնակիորեն, նույնպես սկսեցին ստացվել պարենամթերքով բեռնված վագոններ: Այնպես որ, բնակչության ապահովման հետ կապված վիճակը թեև բավարար չէ, բայց, համենայնդեպս, օրհասական էլ չէ:

Մենք Հայաստանի բարեգործական և մյուս հասարակական կազմակերպություններին, Հայաստանի ամբողջ ժողովրդին խորին շնորհակալություն ենք հայտնում կամավոր նվիրատվությունների միջոցով Արցախին օգնություն ցույց տալու համար: Դրա հետ մեկտեղ, հիանալի պատկերացնելով Հայաստանի ներկա տնտեսական վիճակը, որը կապված է տարերային աղետի, ավելի քան 200 հազար գաղթականներ Հայաստան գալու հետ, ինչպես նաև Հայաստանի շրջափակման հետևանքով առաջացած դժվարությունների հետ, մենք գտնում ենք, որ այդ նվիրատվությունները ամենից առաջ պետք են հենց Հայաստանին: Իսկ արցախցիներին այսօր, ինչպես որ առաջ, առաջին հերթին հարկավոր է քաղաքական ու բարոյական աջակցություն, որը միշտ մեզ ցույց են տվել հայրենակիցները:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

(Արմենպրեսի սեփ. թղթ.)

Ստեփանակերտ